№ 4 ԱՊՐԻԼ 1897

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղբիւր № 4

Աղբիւրի ալբոմ. *Բախտաւոր մայրը* (պատկեր)։ *Որդիական սէր*. փոխադր. Հ. Բաբ.։ *Բարեսիրտ Պարոյրը*. Յովհ. Ճաղարբէգեանց։ *Հպարտութիւն* (Ֆրանսերէնից). Ար. Ամիրեան։ *Աստղիկ* (ոտանաւոր). Գ. Բաբուրեանց։ *Մանիշակը* (Կովալէնսկուց). Սոֆիա Տէր-Ստեփանեան։ *Գեղջուկի քաղցանքը* (ոտանաւոր). Աշըղ Հաղիրի։ *Թիւրիմացութիւն* (Առակ). Ար. Ատովմեան։ *X-ին* (ոտանաւոր). Եր. Պալեան։ *Գանձակի շուկան Զատկին*. (պատկեր)։ *Հրաշագործութիւնների գիշերը* (ռուսերէնից). Օր. Անահիտ Եգեկեան։ *Վայելչակազմը եւ Լուսազեղը*. Հէքիաթ. (կրշարունակ.). Եր. Մովսիսեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Բնագիտական զրոյցներ. XII. *Զիւնապատ լեռները չեն մեծանում*։ Ե. Թոփչեան։

ԱՅԼԵՒ ԱՅԼՔ

Սոխակին (ոտանաւոր). Յ. Բաբախանեան։ *Խելօքն ու յիմարը*. Յ. Բ.։ *Պատմեցէք քովանդակութիւնը* (պատկեր)։

ԶԻԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Թւաբանական խնդիրներ։

Նոր հրատարակութիւններ։

Յայտարարութիւններ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նոր գրքերը.

I

Արման Բոզո. «Մկնիկը» (La souriciere). վոդեվիլ մէկ արարածով։ Փոխադր. ռուս. Ա. Վրոյրի։ Միջադիր, 20 էջ։ Տպագրուած է սոյն թերթին հագու, «Արօրի» տպարանում. գինը 20 կոպ.։

II

Յովհ. Տէր-Միրաքեանց. «Ժողովրդի ընթերցանութիւնը». միջադիր, 61 էջ։ Տպագրուած է սոյն թերթին Թիֆլիսում, Մ. Ռօտինեանցի տպարանում. գինը 25 կոպ.։

III

Ս. Ք. «Հոյսերի կեանքը». պատկերներով. (ըստ Ֆիգէյի ու Տիմիրեազեւի)։ Միջադիր, 32 էջ։ Տպագրուած է սոյն թերթին Պետերբուրգում, Յ. Ի. Լիբերմանի տպարանում գինը 8 կոպ.։

Բախտաւոր մայրը

Աղբիւրի ալբոմ

Մարիլ 1897.

ՊԵՏԿԵՐԱՁԵՐՊ ՄԵՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
եւ յաւելած դասիարակների համար
XV ՏԵՐԻ № 4 Ա Պ Ր Ի Լ 1897 թ.

Որդիական սէր

Մի երեխայ վազում էր փողոցի միջով։ Յանկարծ նրա հանդէպ եկաւ մի սայլ։ Երեխան չըտե-

սաւ սայլը եւ ընկաւ նրա տակ։ Ակն անցաւ երեխայի ոտի վրայով եւ ջարդեց։ Հիւանդին տարան տուն։

Նրա մայրը հիւանդ էր եւ լսելով այդ լուրը՝ վախից ուշաթափուեց։

Երեխան չէր կրակծում երբ ոտը կապում եւ ուղղում էին։

--Արդեօք ոտդ չէ՞ ցաւում հարցրեց բժիշկը։

--Աւելի քան սաստիկ է ցաւում ոտս պատասխանեց երե-

խան. սակայն չեմ ուզում որ մայրս լսի կակիծս. վախենում եմ որ աւելի հիւանդանայ:

Փոխադր. Հ. Բար.



Հրաւէր գարնան

—

Արի՛ գարուն,
Արի՛ սիրուն,
Եւ մեզ դու բեր
Նախշուն դաշտեր,
Վճիտ առուակ,
Պարզ, սառնորակ.
Անթիւ հաւքեր,
Անուշ երգեր.
Ծաղկունք ու բոյս,
Պարզ արշալոյս,
Գառներ, հովիւ
Բոյրեր անթիւ,
Ծառ ու տերև,
Պայծառ արև:

Պեռ. Փոնոռեանց



Բարեսիրտ Պարոյրը

—

արևան առաջին օրն էր—մարտի ինն. ես գնացի քաղաքից դուրս զբօսնելու։

Մեր քաղաքի բնակիչների համարեա մեծ մասը դուրս էին եկել քաղաքից գարնանը դիմաւորելու։

Օրը պարզ էր և հով. երեխաները խաղում էին գնդակով և ուրախ-ուրախ վազվզում։

Ես մօտ քառորդ ժամ զբօսնելուց յետոյ, մի քարի վրայ նստեցի, խաղացող մանուկներին նայելու համար։

Ես նկատեցի, որ ինձանից ոչ հեռու, նստած էր մի ցնցոտիներ հագած երեխայ, որ դառն կերպով լաց էր լինում. իսկ նրա մօտ խաղում էր

փոքրիկ Պարոյրը իր նոյնպէս փոքրիկ քոյր Ռուզանի հետ։

Պարոյրը վազելու ժամանակ նկատեց լաց լինող երեխային և վազելով մօտեցաւ. „Ա՛յ տղայ, ի՞նչու ես լաց լինում, ո՞վ է քեզ ծեծել", հարցրեց Պարոյրը։ „Ոչ ոք ինձ չի ծեծել". ասաց տղան. „Ես յիշեցի իմ հօրը, որ անցեալ տարի գարնան սկզբին այստեղ միասին ման էինք գալիս"։

—Այժմ ո՞ւր է հայրդ, հարցրեց Պարոյրը։

—Իմ հայրս երկու ամիս առաջ վախճանուեց և ես մնացի որբ։

—Մայր ունի՞ս, հարցրեց Պարոյրը։

—Մայր ունիմ, բայց հիւանդ է. այսօր ինձ ասաց—վեր կաց, գնա դաշտը, գարնանը դիմաւորելու, որ մեզ համար ուրախ գարուն լինի—ես էլ եկայ. բայց տեսնելով ուրիշ երեխաներին իրանց հայրերի հետ զբօսնելիս, յիշեցի իմ վախճանուած հօրս,—ասաց տղան։

—Անունդ ի՞նչ է, հարցրեց Պարոյրը։

—Արշակ է, պատասխանեց տղան։

Պարոյրը թողեց Արշակին և վազելով գնաց հօր մօտ, որ զբօսնում էր իրանցից ոչ հեռու։ „Հայրիկ, ասաց նա, արի այստեղ"։

—Ի՞նչ կայ, փոքրիկս, հարցրեց հայրը։

—Հայրի՛կ, տես այստեղ մի երեխայ լաց է լինում. ես հարցրի, ասաց որ փչելով վախճանուած իր հօրը՝ լաց է լինում. հայրի՛կ, մայրն էլ հիւանդ է։

Պարոյրի հայրը ուրախացաւ որդու բարեսրտութեան վրայ և հետևելով նրան՝ եկաւ որբ Արշակի մօտ։

Երբ հասան Արշակի մօտ, Պարոյրը Արշակին ցոյց տուեց հօրը՝ ասելով. „Հայրի՛կ, ահա այս տղայի մասին էի ասում. խեղճ տղայ է, ուզում եմ օգնել սրան, բայց ոչինչ չունիմ բացի մի գնդակից։ Ա՛խ, ոչ էլ փող ունիմ։ Հայրի՛կ, այսօր առաւօտը դու ինձ քսան կոպէկ տուիր մրգեղէն առնելու համար, բայց ես պահել եմ. այժմ գնդակս էլ, քսան կոպէկն էլ տալիս եմ Արշակին“. ասաց Պարոյրը և տուեց Արշակին իր գնդակը և քսան կոպէկը։

Պարոյրի հայրը շատ ուրախացաւ իր որդու բարեսրտութեան վրայ և նրան քաջալերելու համար մէկ մանէթ տուեց Պարոյրին և ասաց. „Ապրիս, որդիս, միշտ այդպէս բարեսիրտ եղի՛ր, թշուառին ու խեղճին օգնի՛ր և տխուրին ուրախացրու, որ Աստուած էլ քեզ օգնի և մխիթարէ. ա-

հա այս մանէթը։ Ես տուր Արշակին և ասա՛, որ մի բան հարկաւոր գալուս՝ գայ մեզ մօտ»։

Պարոյրը մանէթը տուեց Արշակին և հօր ասածն էլ յայտնեց նրան։

Արշակը շատ ուրախացաւ, համբուրեց Պարոյրի հօր ձեռքը, մնաք-բարև ասաց Ռուզանին և Պարոյրին, և գոհ սրտով հեռացաւ իր հիւանդ մօրը մխիթարելու...

Ցոմի. Ճաղարբէգեան

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

(Ֆրանսերէնից)

ՐԻՈՐԴ Հեղինէն, որ իշխանապն էր, ապրում էր իր հոյակապ ամրոցում: Նա շատ հպարտ բնաւորութիւն ունէր և արհամարհանքով էր նայում աղքատների վրայ:

Մի անգամ եկաւ նրա մօտ աղքատ բանուորի աղջիկ Մարիամը և ասաց նրան, թէ իր հայրը, որ գտնւում է մահւան անկողնում, կամենում է իրան տեսնել, որովհետև մի շատ լուրջ տեղեկութիւն ունի նրան յայտնելու: Օրիորդը պատասխանեց նրան արհամարհանքով, թէ ժամանակ չունի և աւելացրեց. „Մի՞թէ տեսնւած բան է, որ ինձ նման դիրք ունեցող մի անձնաւորութիւն գնայ աղքատ բանուորի խրճի-

թը, թէ ինչ է՝ նրան մի ինչ-որ լուր պէտք է հաղորդեն։" Մարիամը գնաց և մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ դարձեալ վազելով վերադարձաւ և ասաց. „Օրիորդ, շուտ արէք, եկէք. պատերազմի ժամանակ ձեր հանդուցեալ հայրը հրամայել է հօրս թագցնել պատի մէջ մեծ քանակութեամբ ոսկի ու արծաթ և յայտնել ձեզ դրա մասին, երբ որ դուք քսան տարեկան կըլինէք։ Բայց հայրս, տեսնելով մահուան մօտենալը, կամենում է յայտնել ձեզ այդ գաղտնիքի մասին հէնց այսօր"։ Լսելով այդ խօսքերը, իշխանազն օրիորդը խսկոյն վազեց բանուորի տունը։ Երբ նա մտաւ խրճիթը, աղքատ բանուորը մեռած էր։ Ոսկին չըգտան, և օրիորդը իր հպարտութեան պատճառով զրկուեց հարըստութիւնից։

Ար. Ամիրեան



ԱՍՏՂԻԿ...

Մութ երկնքում դու փայլում ես,
Ինչպէս լոյսը իմ սրտում.
Սակայն, կարծեմ, դու էլ ինձ պէս
Միշտ տխուր ես և տրտում...

—

...Էլ ա՛մպ չըկայ մութ երկնքում,
Դո՛ւ, օ՛ աստղիկ, ուրախ ես...
Իսկ իմ սիրտը այս խեղճ կրծքում
Դեռ տանջւում է... լոյսի՛ պէս։

Գ. Բաբուրեանց

ՄԱՆԻՇԱԿԸ

(Կուալենսկուց)

Աշնանային սաստիկ քամին աղմուկով և սուլելով ներս էր մտնում անտառի խորքերը. ծանր տնքում էին բարակ թխտենիները, դողում էր երկչոտ թիկին, իսկ ճկուն ուռենին կախել էր իր բոլոր ճիւղերը և դառն արցունքներ էր գլորում երկիւղից կապուտակած լճակի մէջ։ Միայն հինաւուրց կաղնին էր կանգնած աներկիւղ. նրա արմատները խոր տարածուել էին հողի մէջ, իսկ բունը հզօր և պինդ էր։ Կաղնու դեղնած տերևները պինդ կպել էին միմեանց և չէին թողնում, որ քամին մերկացնէ իրանց հարազատ ծառին։

Հաստ կաղնու տակ բսել էր մանիշակը։ Փոքրիկ թփիկը կուչ էր եկել, չորացած տերևները ոլորուել էին և խղճալի կերպով թոթովում էին միմեանց հետ. մանիշակի գլխիկը կախ-

ւել էր և նրա տխուր դէմքի վրայ նկատւում էին արտասուքի հետքեր։

Քամին կրկին սլացաւ անտառի վրայով, գետնի երեսով, կարծես ուզում էր աւլել գետինը։ Մանիշակի երկու տերևները պոկւեցին, արագ պտտելով վեր բարձրացան և սլացան հեռու, հեռու։ Թառամած ծաղիկը իր բոլոր տերևներով շրջւեց դէպի լաչնու արմատը և տխրութեամբ սեղմւեց։

Սակայն քամին բաւականացաւ իր խաղերով. հանգիստ թողնելով անտառը՝ սլացաւ դէպի դաշտ։ Անտառի ներսը ամեն ինչ հանդարտւեց. երբեմն միայն շատ թոյլ հառաչներ էին լսւում այս կամ այն տեղից։ Երկիւղից տանջւած մանիշակը դեռ կպած էր կաղնու արմատներից և չորացած թերթիկները խաչած՝ սպասում էր մահւան։ Վերջապէս, նա իր ամօթխած աչքերը վեր բարձրացրեց և խղճալի կերպով թոթովեց. «Մնաս բարև, վաղեմի կաղնի. շնորհակալ եմ ստւերիդ և հովիդ համար, դու բարի էիր դէպի ինձ, բոլորն էլ բարի էին,—շնորհակալ եմ բոլորից։ Մնաս բարև, լոյս աշխարհ, այժմ ամեն ինչ վերջացած է. ես մեռնում եմ»։

Հզօր կաղնին, որ իր գլուխը չէր խոնարհեցրել փոթորկի առաջ, նայեց դէպի իր ոտերի տակ։—«Դու տանջւում ես, խղճուկ մանիշակ», ասաց նա,—«բայց չես մեռնիլ. թող քամին շառաչէ, թող անձրևը թակէ մեզ, թող ձիւնը ծանրաբեռնէ մեր ճիւղերը,—ոչ ոք չի մեռնիլ»։

—Բայց իմ սիրտը արդէն դադարում է բաբախելուց, հիւթս կանգ է առնում երակներիս մէջ, և ես զգում եմ, որ մահս մօտենում է. թոյլ ձայնով ասաց մանիշակը։

—Աշխարհումս ոչ մի բան չի մեռնում, հաւատա՛ ինձ, շարունակեց կաղնին. ես արդէն երկար տարիներ է որ ապրում եմ. ամենից առաջ ես եմ բնակութիւն հաստատել այս անտառում. մեր բոլոր շրջապատողների սերմերը իմ օրով են ընկել հողի մէջ. ես տեսել եմ նրանց մանկութիւնն ու երիտասարդութիւնը. շատ բան եմ տեսել իմ կեանքում, շատ եմ

մտածել. ոչ մի բան բոլորովին չի մեռնում,—Հաւատա՛ ինձ, մատաղ մանիշակ։

—Լսիր, շարունակեց կաղնին.—մի անգամ ես տեսնում էի, թէ ինչպէս մեռնում էր նորահաս թխտենին. ես էլ այն ժամանակ ջահել էի, սիրում էի այդ թշուառ, ճկուն ծառը և չէի կարող առանց վշտի նայել նրա վրայ։ Ազատ աճում էր նա ինձ մօտ. ուրախ ու երջանիկ էր թխտենին, բայց եկաւ մարդը և երիտասարդ ծառը կորստի մատնեց... Հիւթը ծորում էր նրա վէրքերից... Ես տեսնում էի, թէ ինչպէս թառամում ու կախ էին ընկնում նրա տերևները. տեսնում էի, թէ ինչպէս տխուր ու տրտում, լռիկ մեռնում էր նա։ Գարունն եկաւ. ծառը այլ ևս չբտերևեց, բարակ, չոր ճիւղերը սկսեցին կոտրտել. ճկուն բունը թեքւեց դէպի մի կողմ և օր օրի վրայ կռանում էր դէպի գետին։ Մի ամառնային առաւօտ ճայթիւն լսւեց. յետ նայեցի և հազիւ կարողացայ գիրկս բանալ,—խոշոր ծառը ուղիղ ընկաւ իմ կրծքի վրայ։ Զորացած թխտենուն պինդ գրկած՝ վշտից քարացածի նման կանգնել էի։ Ձեմ յիշում, թէ որքան ժամանակ կանգնեցի նրան նայելով։ Կարծում եմ, որ իմ գլխի վրայով շատ օրեր և գիշերներ անցան։ Երբ սթափւեցի, տեսայ որ իմ թանկագին բեռը փտել է և փոշիացած թափւում է իմ կրծքի վրայ։ Կեանքից յոգնել էի, ոչ մի բան չէր հետաքրքրում ինձ։ Բայց ժամանակը յաղթեց, կրկին եկաւ գարունը, ծագեց արեգակը. արթնացայ, նայեցի չորս կողմս, նայեցի դէպի այնտեղ, ուր առաջ կանգնած էր իմ գեղեցկուհին,—սիրտս ուժգին բաբախեց. հէնց նոյն տեղում բսել էր մի բարակ, մատղաշ, սիրունիկ թխտենի, իսկ և իսկ իմ սիրելիի նման։ Ես ցնցւեցի իմ բոլոր ճիւղերով և թափ տւի խուճուճ գլուխս, կարծելով թէ այդ բանը երազ է։ Բայց դա երազ չէր։ Իմ թխտենին առողջ արմատներ էր թողել գետնի մէջ. ոչ մի որդ չէր մտել նրա սիրտը. նա փչացած չէր և նոր շիւեր տւեց, որ առաջւանից աւելի գեղեցիկ

էին։ — Ո՛չ մի բան բոլորովին չի մեռնում, Հաւատա ինձ, վերջացրեց Հնադարեան կաղնին։

Գունաթափ մանիշակը պինդ կպել էր կաղնու արմատներից. նա ուժասպառ էր լինում, բայց մի մխիթարական զգացմունք ներս սպրդեց նրա սիրտը։ — Միթէ դեռ յոյս կա՞յ, — մտածեց նա և յիշեց իր արմատները։

— Շար որդերը, արդեօք, չե՞ն մտել իմ սիրտը, անցաւ նրա մտքով. — բայց ո՛չ, կաղնու շուրջը հողը պարարտ է, իմ արմատները թարմ և առողջ են, ես միշտ խնամում էի նրանց։ Միթէ դեռ յոյս կա՞յ... և նրա սիրտը բաբախում էր վշտալի։

Կրկին շառաչեց քամին, կրկին շատ չորացած ճիւղեր կոտրեց, և ահա, վերջապէս, հասաւ ձմեռը. սառը ձիւնը սպիտակ սաւանով ծածկեց գետինը, թիտենիների ճիւղերը կռացել և ճռճռում էին նրա ծանրութեան տակ. խուլ տընքում էր հինաւուրց կաղնին, բայց ուժեղ արմատներով պինդ բռնել էր գետնից, իսկ մանիշակի հետքն էլ չըմնաց։ Բայց և այնպէս արեգակը ծածուկ նայում է իր սիրելիներին. նա յայտնւում է երկնքի վրայ, և ճառագայթները ծառերի կողքերից թաղուն մտնում են մերկացած ճիւղերի տակ, թեթև կերպով շոյում են ծառերի մերկ կատարները, և կրկին քաշւում է արևը, մայր մտնում... Երկար չի երևում նա, և անտառի բնակիչները յոյսերը կտրում են՝ նրան տեսնելու։ Բայց արեգակը կրկին փայլում է մշուշի յետևից, կրկին նայում է անտառի վրայ և կարծես ասում է — «յո՛յս ունեցէք»։ Այդ խօսքերը բոլորին ոյժ և տոկունութիւն են տալիս. ամենքը կանգնում են ժիր և լուռ սպասում են. «Ե՞րբ է լինելու, ե՞րբ». ժամանակ ժամանակ ձայն է հանում երիտասարդ ուռենին և թեքւում դէպի սառած լճակը, փորձելով իր տերևազուրկ ճիւղերով, թէ չի՞ հալւել արդեօք թափանցիկ սառոյցը։ Արեգակը կրկին նայում ու ժպտում է, և ճիւղերի վրայի սառցէ շիթերը արտացոլում են նրա ժպիտը. ծառերը կարծես ջահելանում և ողող-

ւում են վարդագոյն լուսով. բայց մի բոպէից յետոյ կրկին ամեն բան գունատւում ու մեռած է երևում:

Ահա անցնում է ձմեռը. արեգակը յաճախ է այցելում դաշտերն ու մարդաղետինները, և ոչ գաղտագողի, այլ երկար և ուրախ շողշողում է ճիւղերից գլորւող ջրի կաթիլների մէջ. օր օրի վրայ ձիւնը փափկանում է և բոլորովին պատրաստ է ջուր դառնալու, բայց ցուրտը դեռ բոլորովին չի ուզում զիջել արևին, և հէնց նա մայր է մտնում թէ չէ, ցուրտը կրկին դաղարեցնում է ջրերի հոսանքը, սառոյց է դարձնում փափկացած ձիւնը և շղթայում, կանդնեցնում է ճիւղերի մէջ թարմ հիւթը: Բայց արեգակը այժմ քիչ է բացակայում և, վերջապէս, նա բոլորովին արտաքսում է ցրտին...

Անտառում էլ ձիւն չի մնացել. ծառերի ճիւղերը աղատւել են նրա ծանրութիւնից և յոգնած ձգտում են դէպի վերթարմ հիւթը հոսում է նրանց երակներում: Տեղ-տեղ կանաչում է մամուռը և մատղաշ խոտի ընտանիքը դուրս է գալիս խիտ և կարմրաւուն փնջիկներով: Վաղեմի կաղնին լացում և թափ է տալիս իրանից դեղնած տերևները, մաքրում է ճիւղերի վրայից սարդի ոստայնը և պատրաստւում է տերևելու: Ահա նա նայեց իր ոտների տակ,—նորատի մանիշակը արդէն պճնել է մոյդ կանաչ տերևներով. նրա քնքուշիկ գլխիկը հազիւ երևում է նրանց տակից, բայց աչիկները դեռ փակած և ծածկած են կանաչ, բարակ ծածկոցով: Նայում է հինաւուրց կաղնին և ուրախանում: Ծածկոցը կամաց կամաց շարժւում է և, վերջապէս, վայր է ընկնում նրա ուսերի վրայ աչքերը դէպի երկինք դարձրած և ուղարկում է դէպի այնտեղ սքանչելի բուրմունքի մի նուրբ ամպիկ:

—Բարև քեզ, հինաւուրց բարեսիրտ կաղնի. ես յարութիւն առայ. ուրախութեամբ գլուխ տալով, ասում է նա իր վաղեմի բարեկամին:

Սոֆիա Տ.ր-Ստեփանեան



ԳԵՂՋՈՒԿԻ ԲԱՂՁԱՆՔԸ

Քօթաբեր ձմեռը կեանքս արաւ կէս,
Քեզ եմ սպասում անդադար, ով գարուն.
Շուտով արի, փրկիր մերձի մահ եմ ես,
Քեզ եմ ապաւինում, պաշտելի անուն:

Սաստիկ ցուրտը չըթողեց աչքս բանամ,
Տեսնեմ զաւակներիս դեղ, դարման անեմ,
Ցոյց տուր պարզ երեսդ, որ ուրախանամ,
Հօտաղներիս կանչեմ, վար ու ցան անեմ:

Խղճա մեզի, շուտ հասցրու քո ձեռը,
Եթէ ոչ մեռնում ենք, մօտ է մեր մահը.
Մեզնից հեռացրու դաժան ձմեռը,
Նրա տեղը թող բարձրանայ քո գահը:

Շարունակ փոթորիկների պատճառով
Ամեն ինչ մեռած է, տխուր է մեր մէջ.
Ոգի ու կեանք տուող, դու արի բարով,
Ծաղկունքներիդ հոտը թող բուրէ մեր մէջ:

Լիանայ մեր երկրի ամեն պտուղը,
Եւ օրիս փոխարէն բացի կարմիր վարդ,
Կենդանանան մեր քաղաքն ու գիւղը,
Երջանիկ ապրեն անասուն և մարդ...

Աբրդ Հազիրի

ԹԻՒՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ

(Առակ)

Ալինում է չի լինում մէկ Հովիւ. այդ Հովիւը խօսել իմանում է, բայց ուրիշի խօսածը չի հասկանում: Մի օր այդ Հովիւը իր փարախում պարկած մռմռում էր, իբր թէ երգում էր, բայց փոքր առ փոքր քունը տանելով քնեց: Փարախի մէջ մէկ անցք կար. ոչխարները այդ անցքից դուրս եկան և արածելով հեռացան փարախից: Հովիւը զարթնեց և տեսաւ ոչխարները չկան. նա գնաց փնտռելու նրանց. և պատահեց մէկ երկրագործի, որ հերկում էր գետինը. այդ մարդը նոյնպէս Հովիւ նման էր, խօսել իմանում էր, բայց ուրիշի խօսածը չէր հասկանում: Հովիւն ասաց նրան.

—Այ մարդ, իմ ոչխարները խօ չե՞ս տեսել:

Երկրագործը չըպատասխանեց:

—Այ մարդ, ասա,—կրկնեց Հովիւը, մատով ցոյց տալով՝ որ կողմը գնացին, վերև թէ՞ ներքև:

Երկրագործը դողաց. կարծում էր թէ Հովիւն ասում է, այդ արտը իմն է, ի՞նչու ես հերկում:

—Աստուած վկայ, ասաց երկրագործը, անցեալ օրն եմ առել կաղլիկ Աւետիսից. չես հաւատում, գնա, իրան հարցրու:

—Այ մարդ, ասա, ո՞ր կողմը գնացին վերև թէ ներքև. որ ուղիղ ասես՝ ես քեզ մի այծ կ'ընծայեմ:

—Աստուած վկայ, այս արտն իմն է. ա՛յ, տեսնում ես այն քաշած ցանկը. այնտեղից մինչև այն միւս ցանկը իմն է: Նա մատով ցոյց տալով շարունակեց.—իսկ ցանկից դուրսը Օհանինն է:

Հովիւն այնպէս կարծեց, թէ սա ցոյց տուեց թէ այնտեղ են գտնում իր ոչխարները. նա գնաց և մտքումը դրեց, որ եթէ գտնի՝ պոզը կոտրած այծը նրան կընծայէ: Եւ գնաց գտաւ: Եկաւ այն մարդու մօտ, պոզը կոտրած այծիցը բռնեց, գցեց այն մարդու առաջ և ասաց.

—Ահա, քեզ լինի այս այծը, որովհետև դու ուղիղ ասացիր. ընծայում եմ քեզ այս այծը:

—Աստուած, երկի՜նք, գետի՜նք, պոզը ես չեմ կոտրել:

Հովիւը հէնց էմացաւ, թէ պոզը կոտրած այծը չէ ուզում:

—Այ մարդ, վերցրու, լաւը չեմ տայ. ուզում ես՝ վերցրու, չես ուզում, ուրիշը չեմ տալ:

Հովիւն ու մարդը սկսեցին մէկ մէկու հետ կռուել. նա ուրիշ բան էր խօսում, նա ուրիշ, և նրանք գնացին դանդատելու:

Գնացին և տեսան մի պատանի տղայ, նստած է մի քարի վրայ. այդ տղան էլ դրանց նման էր—խօսել իմանում էր, բայց ուրիշի խօսածը չէր հասկանում: Սա տատից նեղանալով տնից փախել էր: Սա կարծեց թէ այդ մարդիկ իրան իրատում են, որ գնայ տուն: Տղան գլուխը ցած գցած՝ նայում էր գետնին: Հովիւն ու երկրագործը բոլոր եղելութիւնը պատմեցին նրան:

Երկրագործը շարունակեց.

—Այ տղայ, ասա թէ ո՞վ է մեղաւորը. ես այնտեղ իմ արտը հերկում էի, այս հովիւը եկել ասում է, թէ դու ես այս այծի պոզը կոտրել:

Տղան ոչինչ չէր պատասխանում: Հովիւն ու երկրագործը շատ վիճեցին, շատ կռուեցին, բայց ոչինչ դուրս չեկաւ: Տղան գլուխը չէր բարձրացնում. նա վերջը ասաց.

—Տանից բոլորովին միք խօսալ. քանի քաւթառ նանին այնտեղ է, ես տանը ոտ չեմ դնիլ:

Հովիւը, երկրագործը, տղան շատ վիճեցին և սկսեցին իրար դնքսել: Վերջը ուրիշները եկան նրանց բաժանեցին միմեանցից և հասկացրին թիւրիմացութիւնը:

Ս.Բ. Ասովմեանց



X-ԻՆ

Դու տես իմ աչքեր, լցած ու տրտում,
Որ նայում են քեզ տենչանքով անհուն,
Կարդա դու այնտեղ ուրիշ խոր յուզ-
մունք,
Տե՛ս այնտեղ փայլած յուսահատ արցունք։

—

Եւ տխուր խօսքիս հնչիւնի միջից
Լսի՛ր դառն ցաւ, թունալի կսկիծ,
Եւ իմ մտազբաղ դէմքս վաստակած
Թող պատմի քեզ միտք, սէր, տանջանք, կասկած։

—

Դու տես իմ երեր քայլերս մոլոր—
Մռայլ է այսպէս կեանքն իմ մենաւոր,
Գնում են նրանք մի խուլ նանապարհ—
Այնտեղ դու կարդա մրցումն անդադար...

Եր. Պալեան

Ժրնեւ



Գանձակի տեսք Զատիկին:



ՀՐԱՇԱԴՐԱՖՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԻՇԵՐ

(Ռուսերենից)

տարիներ սրանից առաջ էր։ Անդրկովկասեան ծովափնեայ փոքրիկ քաղաքներից մէկում՝ Հիւանդութիւնս ինձ անորոշ ժամանակով արգելք էր դարձել։ Միակ բանտարկութեանս միջոցին, ինչպէս կատակով կոչում էի ես իմ լինելը վատ Հիւրանոցում, —թէև դա լաւագոյնը լինէր ամբողջ քաղաքում,— իմ միակ ընկերն էր մի երիտասարդ Անգլիացի, մօտ 35 տարեկան, միստէր Թոմ Իսլինգտրն։ Նա մի մեծ ճանապարհորդութիւն էր անում Ռուսաստանում, և կանգ էր առել միևնոյն քաղաքում ինձ հետ, սպասելով շոգենաւի մեկնելուն, որ երթևեկում էր Բաթումի և Պարսելի մէջ, և նաև նրա համար, որ կարդի բերէ իր հատ հատ դիտողութիւնները, որ նա ճանապարհին նշանակել էր իր յուշատետրում, և ամփոփէ այն խառնիխուռն ամբարած տպաւորութիւնները, որ նա ստացել էր իրան, ինչպէս ինքն էր ասում, վաղուց հետաքրքրող երկրի ծանօթութիւնից։ Մենք շատ շուտ մօտեցանք իրար, որ յաճախ պատահում է միմեանց հետ հասարակաց շատ բան ունեցող մարդկանց, և ամբողջ գիշերներ միասին էինք անցկացնում։ Այժմ, գրելով այս տողերը, մեծ հաճոյքով

յիշում եմ այն ժամանակը և այդ մարդուն, որի հետ անցկացրի այնքան զեղեցիկ ժամեր։ Նա շատ էր ճանապարհորդում, հիմնաւորապէս կրթուած էր, լաւ գիտէր ռուսաց գրականութիւնը և թէև ոչ բոլորովին ազատ, բայց և այնպէս այնքան լաւ էր խօսում ռուսերէն, որ ես առանց դժուարութեան կարող էի խօսակցել նրա հետ։ Ի միջի այլոց նա ինձ զարմացրեց՝ ռուսական սովորութիւններին, նախապաշարմունքներին, գուշակութիւններին լաւ տեղեակ լինելովը։ Իմ զարմանքիս պատճառով նա զարթ ծիծաղեց և ասաց.

—Այստեղ զարմանալու բան չկայ։ Ես լաւ յիշողութիւն ունիմ, իսկ Սախարովի ռուսական զրոյցների երկու փոքրիկ հատորները միշտ սեղանիս վրայ են։ Մի ծիծաղէք։ Երեխայութիւնիցս ես սաստիկ հակուած էի եղել դէպի խորհրդաւորը և անսովորականը։ Իսկ տարիների ընթացքում այդ կիրքը գընալով սաստկացաւ։ Գիտէք,—նկատելի աշխուժով, շարունակեց նա,—երբ ես ճանապարհորդում էի Հնդկաստանում, չորս տարուց աւելի անցկացրի Գանգէսի վրայ և նրա միւս կողմում։ Հնդիկների սրբազան գետի ափերում անցկացրած կեանքիս յիշողութիւնը մինչև այժմ էլ ամենաերջանիկներիցն է կեանքիս մէջ։ Ես զբաղւում էի այնտեղ ձեր և Հնդիկների աւանդութիւնների և գուշակութիւնների բախտաւորութեամբ, և իրաւ, թէև զարմանալի է, շատ նմանութիւն գտայ։ Ի միջի այլոց, դուք գիտէք, որ Հնդիկների երիտասարդ աղջիկները, ինչպէս և ձերոնք, հայելու, կամ միևնոյնն է, ջրի մէջ են նայում, գուշակելու թէ ո՞վ կըլինի իրանց փեսացուն։ Այդ բաւական չէ, նրանց աւանդութիւնն ասում է, որ գուշակութեան ամենալաւ ժամանակն այն է, երբ հին տարին նորին է անցնում։

Յետոյ բաժանուելիս, որ վերադառնում էր Լոնդոն, նա ինձ ասաց.

—Ես գիտեմ, որ դուք, ինչպէս և ես, սիրում էք այն տեսակ յատկական անցքեր, որոնց մէջ տարօրինակ բաներ կան,

որ մարդու հաւատալը չի գալիս։ Ես կըտամ ձեզ կարդալու և մինչև անգամ կընծայեմ մի փոքրիկ ձեռագիր՝ թէ ինչպէս ես մի անգամ, տարեմուտին, Դէրջէլինգի մօտ ապրելիս, ուզեցի գուշակութեամբ զբաղուել, և ինչ եղաւ հետևանքը...

Ես նրան շնորհակալութիւն արի և հարցրի.

—Իսկ այդ բանը կարելի՞ է պատմել Ռուսաստանում։

Մի փոքր մտածելուց յետ, պատասխանեց.

—Բերանացի կարող էք պատմել՝ ում որ ուզում էք, բայց տպելը թոյլ եմ տալիս ձեզ միայն մահուանից յետ։ Թէ չէ կըծաղրեն ինձ ձեզանում՝ երկրորդ անգամ Ռուսաստան գալիս, իսկ իմ միտքս է՝ որ անպատճառ էլի մի անգամ ձեր կողմերը գամ։

Այդպէս, ես լռութեամբ պահում էի այդ բանը՝ ճշտիւ կատարելով ծանօթիս կամքը, և միայն այժմ վճռում եմ ի լոյս հանել նրա ձեռագիրը, որովհետև միստէր Թոմ Իսլինգտընը մեռած է։ Նա մեռաւ Չիկագոյում, աշխարհահանդէսի ժամանակ, զոհ դառնալով տխուր ադէտքներից մէկին, որը հռչակաւոր կացրեց 1893-ի տիեզերական աշտարակաշինութիւնը։

Ահաւասիկ այդ ձեռագիրը։

. . . . . .

Մանկութիւնից ես մի անուղղելի մտորող էի։ Ճանապարհորդում էի ամբողջ երկրագնդի ամենահետաքրքրական տեղերը. և ոչ միայն զուարճութեան համար, ինձ պէս շատ աշխարհաշրջիկների նման, և ոչ էլ միայն գիտական նպատակով, ինչպէս հայրս, այլ մի խորհրդաւոր յուսով թափանցել տիեզերական գաղտնիքների խորքը և վանել բնութեան համարեա ամենին անյայտ ծածուկները։ Հնդկաստանում, ուր ես մնացի բաւական երկար, վճռեցի ամենայն միջոց գործ դնել ֆակիրների արուեստի հետ ծանօթանալ և, որքան կարելի է, խորամուխ լինել գաղտնագիտութեան ամենամօտ ծանօթ ճա-

նաչուած Իոգ-բաջանների աւելի վերացական ծանօթութիւնների մթութեան մէջ։ Միայն ես խոյս էի տալիս մարդաշատ կենդրոններից, և ձեռնարկում էի հեռաւոր շրջագնացութեան երկրի խորքը՝ աշխատելով այնտեղ մի ուսուցիչ գտնել, իսկ որ դիտնական, և ոչ թէ մի որ և է խաբեբայ, որոնք շատ են Հնդկաստանում։ Եւ բախտ ունեցայ գտնել այդպիսի մէկին։ Արդէն այն ժամանակ ես հիմնաւորապէս գիտէի սանսկրիտերէնը և դրա շնորհիւ, մեր տեսական պարապմունքները շատ շուտ առաջ գնացին։ Արդէն հասել էր ժամանակը, որ որոշել էր իմ *գուրուն*,—այդպէս է կոչւում այն տեղերում ուսուցիչը—գործնական փորձերը սկսելու համար, որոնք ամենից շատ էին ինձ հետաքրքրում, երբ յանկարծ նա սաստիկ հիւանդացաւ։ Դա պատահեց դեկտեմբերի վերջերին, Նոր-Տարուց մի քանի օր առաջ։ Ես այցելում էի նրան համարեա ամենայն օր. արդէն սրտով կապուած էի նրա հետ պարապմունքների ժամանակ։ Վտանգը շուտ անցաւ, բայց հիւանդութիւնն այն տեսակներից էր, որոնք պահանջում են երկար ժամանակ առողջանալու համար, և յետոյ մեծ զգուշութիւն։

Ես շատ էի տխրում առանց իմ դաստիարակին։ Թէպէտ մենք շատ յաճախ տեսնւում էինք, բայց հիւանդ մարդը առողջ մարդ չէ։ Այնուամենայնիւ ես սրբութեամբ պահում էի նրա պատուէրը՝ առանց իրան ոչ մի նոր բան չըձեռնարկել։

Մի անգամ—երեկոյին էր—ներս վազեց մօտս մի պատանի, ձեռքում մի տոմսակ... Արագ բաց արի գիրը... Նա իմ վարժապետիցն էր և ահա ինչ էր գրած մէջը.

«Իմ երիտասարդ բարեկամ.

Մի վախենաք, եթէ ես եօթն օր բացակայ գտնւեմ։ Որպէս զի մարմինս շուտ լաւանայ, ես վճռեցի նրան նիւթական և հոգեկան լաւ հանգիստ տալ։ Ես կերթամ։ Թմբրանքի մէջ կրթողնեմ նրան մի քանի ժամանակ։ Սպասեցէք ինձ մի շաբաթից յետ և, ինչպէս ես արդէն ձեզ խնդրել եմ, առանց ինձ ոչինչ բանի չըձեռնարկէք։» Դիրմա Սասսրի»։

Ես իսկոյն հետևեցի տղային։ Մի քանի ժամանակից յետ նա ինձ տարաւ իրանց *ընկալոյն*։ Այդ մի փոքր տնակ էր, եղէգնից հիւսուած և արմաւենիներով շրջապատուած։

Այդտեղ, այդ համեստ ապաւէնում, ապրում էր ուսուցիչս այն պատանու հետ, որին նա պատահմամբ գտել էր անտառում, ուր, անշուշտ, բերել էր նրան մեղաւոր մայրը։ Գուրուն նրան որդեգրել էր և մեծացրել։ Ո՞վ է իմանում, կարելի է, նա պատրաստւում էր նրան էլ իր նման իմաստուն դարձնել։

Ես գտայ դաստիարակիս անշարժ և անշունչ։

Նրա, ըստ երևոյթին, անկեանք մարմինը հանգչում էր մի չոր անկողնի վրայ։ Բայց ես չըվախեցայ, լաւ իմանալով, թէ ինչ էր նշանակում նրա բացատրութիւնը. «Ես ժամանակաւորապէս կերթամ»։

Նրա սանիկն էլ, բոլորովին հանգիստ էր երևում, հաւատացնելով, որ այդ երևոյթը առաջին անգամը չէ որ պատահում է Դհրմա Սաստրիին. որ այդ տեսակ հանդստութիւնից, այդ տեսակ երկար բացակայութիւնից յետ, նա միշտ աւելի աշխոյժ և առողջ է լինում։ Այստեղ աւելորդ չեմ համարում ասել, որ իմ *զուրուն* տեսքով քառասուն տարեկանից աւելի չէր երևում, թէպէտ տեղացի ծերերը շատ անգամ հաւատացնում էին ինձ, որ նա իրանցից շատ մեծ է։ Նա մի համեստ, հանդարտ մարդ էր, լղար, բարակ, ոչ-բարձրահասակ, ամենասովորական կերպարանքով։ Միայն կզակը, խիստ ցցուած, և սաստիկ դուրս ընկած ճակատը արտայայտում էին կամքի ոյժը, խորը մտածելու ընդունակութիւնը, որ կենդրոնանում էր մի առարկայի կամ մի ցանկութեան վրայ։ Ես տեսայ նրա մէջ էլի մի զարմանալի յատկութիւն. ինձ թւում էր, որ նրա աչքերը փոխում էին երբեմն ոչ միայն արտայայտութիւնը այլև գոյնը։ Բայց շատ հաւանական է, որ ինձ էր միայն

այդպէս թուում, որովհետև ուրիշները նոյն բանը չէին նկատում։

Ես դուրս եկայ նրա մօտից, բոլորովին հաւատացած, որ չեմ տեսնիլ նրան մի շաբթից առաջ, այն օրը, երբ նա կ'արթնանայ։

Ես հարցրի տղային բաժանուելիս, թէ չի վախենում նա արդեօք՝ մնալով միայնակ անդգայ և անշարժ ուսուցչի հետ անտառում, որտեղ վխտում են վայրենի գազաններ և օձեր և կարելի է, նոյն իսկ, չար մարդիկ։ Դ-հրմա Սաստրիի աշակերտը բացառօրէն թափ տուեց գլուխը և ասաց, որ նրանց համար չար մարդիկ չըկան,—գուրուին ամենքը սիրում են,—ոչ միայն մարդիկ այլև գազանները,—իսկ ամենայն չարիքից արդէն շատ տարուց ի վեր պահպանում են նրանց բարի ոգիները—*պիտրանները*»։

Ես մի քանի անգամ լսել էի այդ հաւատալիքը, որ շատ տարածուած է Հնդկաստանում։ Տուն դառնալուցս յետ երեք կամ չորս օր. էր անցել։ Ես սիրով աշխատում էի, համարեա ամենայն օր այցելում էի «քնած» ուսուցչիս՝ *ըէնգլոուն*, բայց սաստիկ տխրում էի և, ինչպէս բանտարկեալը ազատութեանն է սպասում, անհամբերութեամբ սպասում էի նրա արթնանալուն։ Մի երեկոյ կարդալով, ես սովորականից երկար նստեցի։ Ժամացոյցը տասնեմէկը զարկեց, և յանկարծ չիշեցի, որ այսօր ամենայն տեղ տօնում են տարեմուտը։ Ուստի համարեա միևնոյն րոպէին մի զարմանալի միտք ծագեց գլխումս... «Ճատերը Ռուսաստանում, և շատ կարելի է այստեղ էլ, գուշակութիւն են անում. ես էլ, որ անգործ եմ, չընայեմ հայելուս մէջ»։

Այդպէս էլ արի...

Հանեցի սեղանիցս իմ «մոգական ապակին» և սկսեցի սարքել։ Այդ հայելին ձեռք էի բերել Նիւ-Եօրկում, երեք տարի սրանից առաջ, և միշտ հետս էի ման ածում։ Երբ ինձ

յաջողուեց տեղաւորել նրան երկու մոմերի մէջ տեղը, այնպէս որ մէջը ոչինչ չըցոլանար. նստեցի առաջը և աչքերս անթարթ յառեցի նրա ուռուցիկ և հարթ երեսի վրայ: Առաջ ու առաջ, չըգիտեմ սաստիկ լոյսից թէ հակադրուող խաւարից, որ լցնում էր ահագին սենեակի անկիւնները—նա նախ թուում էր ինձ մի սև բիծ: Բայց ահա, նրա սև մակերևոյթի վրայ, սկսեցին վազել ինչ որ անըմբռնելի, անորոշ, դիւրաշարժ ստուերներ, գծեր, սիւներ, և յանկարծ-քիչ էր մնում ես բացագանչէի, այնքան այդ բանը անսպասելի էր—նրա խորքի վրայ պարզ, պայծառ և բաց որոշ երևան եկան գեղեցիկ հնդկական տաճարի հիանալի աւերակները հասարակածային ահագին անտառի խորութեան մէջ:

«Այդ իրո՞ք եմ ես տեսնում, քնած չե՞մ արդեօք», մտածեցի ես. վճռեցի ձեռքս կծմըթել, հաստատ իմանալու համար, որ քնած չեմ: Բայց այդ բոպէին իմ հայեացքի և ապակու մէջ տեղը պարզուեց փոքրիկ, պղնձագոյն ինձ լաւ ծանօթ մի ձեռք...

Ես արագ վերթռայ տեղիցս և ուրախ բացագանչեցի: Իմ առջև կանգնած էր ուսուցիչս: Նրա երեսը ժպտում էր և նա թափ էր տալիս իր սպիտակ գլխափաթը, կարծես թէ ինձ յանդիմանելով...

—Լաւ չէ, լաւ չէ, անհնազանդ,—ասում էր նա:

—Չէ՞ որ ես խնդրել էի առանց ինձ չըպարապես գաղտնագիտութեան փորձերով:

—Այս ինչ գաղտնագիտութիւն է,—արդարանում էի ես, ցնծութեան ձայներ հանելով որ նա վերադարձած էր,—սա պարապութիւնից առաջ եկած մի հասարակ խաղ է... Ասել է դուք մտադրածից առաջ էք դարթել:

Նա պարզ պատասխանեց.

—Այո՛, ես, ինչպէս տեսնում էք, լաւացել եմ: Բայց դուք իզուր էք անւանում պարապութիւնից առաջ եկած խաղ այն

անը, որով զբաղւած էիք գալուցս առաջ։ Հայելիին հարցնելը ամենևին խաղ չէ։ Ձեր Ամերիկական անխոհեմ ապակին կարող էր այս հինաւուրց տաճարից, որ սկսել էր պարզել ձեր աչքի առաջ, անցնել այնպիսի առարկաների, որոնց ձեզ համար աւելի լաւ կըլինէր չըդիպչել հարևանցօրէն, եթէ ուզում էք արդարև նրանցով զբաղել լրջութեամբ և հետևողաբար... Աւելի լաւ չէ՞ զբօսնել։ Գիշերը հիանալի է և, աւելացրեց նա խորամանկ ժպիտով՝ նայելով ինձ, ցոյց կըտամ ձեզ հշմարիտ աւերակները, որոնք այնքան հետաքրքրեցին ձեզ ապակու միջով։ Ես համաձայնեցի, չըթաղցնելով ուրախութիւնս, և զարմանք յայտնեցի, որ մինչև այժմ մտքից անգամ չէի անցկացնում, թէ մօտերքումը կարող էր այդպիսի մի հետաքրքրական տեղ լինել։

Մի պայծառ, դիւթական և սքանչելի գեղեցիկ հարաւային գիշեր դտանք, ու դուրս եկանք բաց օդը։ Նա շողշողում և փայլում էր լուսնից և միլիոնաւոր աստղերից, ինչպէս թափանցիկ մարգարիտը ադամանդեայ փոշիով ծածկւած, ինչպէս մոգայիկ Ցէյլոնի թանդագին քարերից... Մենք գնում էինք արագ, և շատ շուտ հասանք անտառի ծայրը, որ հեռից մեզ թւում էր իբրև թէ հիւսւած լինէր սև և արծաթեայ ժապաւէններից...

Մի հրաշափառ սիւնակարդ փակեց մեր ճանապարհը, և ես ակամայ կանգ առայ, հրաշալի պատկերիցը ապշած, որը յանկարծ բացւեց աչքերիս առաջ...

Հոյակապշէնք քանդակաւոր դրանդիներից մէկը լողում էր լուսնի լուսի մէջ, իսկ նրա խորհրդաւոր խորքից մերթ բոցավառւելով, մերթ հանգչելով, հիանալի ծփում էր կարմրահեռ բոցը, կարծես թէ այնտեղ, տաճարի ներսում, ուր աչքը չէր կարող թափանցել, խարոյկ լինէր վառած կամ ճենճրւելիս լինէր զոհարանը...

Հնդիկը ձեռքով ցոյց տւեց ինձ մի ինչ որ գրանիտային

հատուած փաթաթուկների և լայնատերև խոտերի մէջ թաղուած, սկսեց ուղևորուել դէպի տաճարը, բայց յանկարծ շուռ եկաւ և ասաց.

—Մի քանի օր սրանից առաջ դուք հարցնում էիք տղային—ես լսեցի ձեր հարցմունքը—ով է պահպանում ինձ օձերից և վագրերից: Դուք այժմ կըտեսնէք նրանցից մէկին, որոնք շատերին պահպանում են վայրենի գազաններից. նրանցից մէկը ապրում է այս տաճարին մօտ և յաճախ այստեղ է գալիս: Միայն, խնդրում եմ, չիշեցէք, որ այստեղից մենակ շարժուելը, ինչ էլ որ պատահի, վտանգաւոր է ձեզ համար...

Նա ինձ գլխով արաւ և դանդաղ կերպով շարունակեց իր ճանապարհը, մինչև որ աներևութացաւ տաճարի սիւների յետևը:

Ես սպասում էի երկար, շատ երկար դուրսի երևալուն, բայց նա դեռ չէր երևում...

Ժամանակը սլանում էր արագ, շուրջս հանդարտ էր, գիշերը ասես կախարդուած լինէր... Աչքերս յոգնեցին—այնքան լարուած, անթարթ, արտասուակոխ լինելու չափ դիտելուցս խորհրդաւոր կիսախաւարը, որը տարածւում էր սիւնակարգի միւս կողմում... Անյայտ պատճառով և՛ այդ կիսախաւարը, և՛ ինձ շրջապատող լռութիւնը, և՛ անշարժութիւնը և՛ իմ մենակութիւնը սկսում էին վախ բերել իմ վրայ: Մի ինչ որ ծանրութիւն ճնշում էր ինձ, մի ինչ որ անբմբռնելի բան, մի սպառմունք անտանելի տանջանքով լի: Ես սկսում էի կորցնել իրականութեան պատկերը, իսկ շուրջս պատող բաների ըմբռնումս լուծւում էր անյայտի, տխուրի և սարսափացող երկիւղի զգացման մէջ...

«Փախչել, փախչել, գնալ այստեղից», մտածեցի ես, բայց յանկարծ յիշեցի Դիրմա-Սաստրիի ասածը, և կանգ առայ:

Աչքերիս առաջ բացւեց մի մեծ քաղաքի տեսարան: Ես նրան տեսայ բարձրից և ճանաչեցի, որ անշուշտ ամերիկական

մեծ քաղաքներից մէկն է։ Բայց այժմ նա ինձ աւելի մեծ թւաց, զարդարւած նորանոր շինութիւններով. զարճատեղերի համար ողջը զարդարւած էր դրօշակներով, կայմերով, տրանսպարանտներով և շողշողում էր տօնական ճրագներով։ Զրոյց, երգ, երաժշտութիւնը հասնում էին ականջիս... Ժողովրդի բազմութիւնը ընթանում էր մի ուղղութեամբ, տրորելով և բոթելով միմեանց և ընկնելով ընդհանուր շարժումի մէջ. ես հետևեցի նրանց տօնական կենդանութեան կենդրոնը, այնտեղ, ուր գտնւում էին գեղեցիկ, ահագին շինութիւնները։ Իմ շուրջը ամենայն բան շարժւում էր, սահում էր, աղմկում էր, և այդ քաօսում ես չէի կարողանում ինձ հաշիւ տալ, որտեղ եմ և ինչ քաղաք է դա։ Յանկարծ մի ահագին բոց գրաւեց ուշադրութիւնս։ Այրւում էր մի բան։

Ամենքը դէպի հրդեհն էին շտապում, դէպի այն կողմն էին շարժւում. ես էլ այնտեղ գտայ ինձ։

Մի անգամից բացւեց առջևս ահռելի տեսարանը և խիստ, անախորժ սարսուռ պատեց ամբողջ գոյութեանս։ Առջևս մի քանի մարդ վազում էին բոցի մէջ, փրկութիւն փնտռելով, ջանալով դուրս պրծնել կրակով պատած մի բարձր շինութիւնից, և այդ մարդկանց մէջ էի ահա և ես... Այդ տեսարանը շատ անախորժ կերպով զարմացրեց ինձ, և առաջին րոպէին ես այնպէս ինձ կորցրի, որ չէի իմանում անելիքս։ Յետոյ ընկղմւած այն մտքի մէջ, որ կորչում եմ, ես վրայ ընկայ ինքս ինձ ազատելու, հաւատացած լինելով, թէ ինձ համար աւելի հեշտ ոչինչ չկայ, ինչպէս վերքաշել ինձ, իմ կրկնակիս,— որը խելագարի նման դէս ու դէն էր ընկնում, այնտեղ, ներքևում,—դէպի այն անվտանգ բարձրութիւնը, որից ես ինքս նայում էի հրդեհին։ Բայց հէնց որ ես ձեռք հասցրի նրան, իմ միւս եսին, յանկարծ զգացի, որ ոչ թէ ես եմ նրան տանում դէպի վերև, այլ, ընդհակառակն, նա է ինձ քարշ տալիս ներքև, դէպի կրակը...

Էլի մի քանի ծանր տառապալից վայրկեան,—և յստակը որոտմունքով փուլ եկաւ մեր վրայ, իսկ նրա հետ միասին և մենք գլխապատառ թռանք մեր առաջ բացուած կրակի անդունդը...

Ես վայրենի կերպով աղաղակեցի, հաւատացած լինելով, թէ այրւում եմ...

—Սայիբ, Սայիբ, ինչ է պատահել ձեզ, ինչու էք այդպիսի ահռելի ձայնով աղաղակում:

«Ա՛, վերջապէս Դրհմա-Սաստրին եկաւ ետևիցս»... մտածեցի ես և հազիւ շարժուեցի...

—Փառք Աստուծոյ, որ դուք վերադարձաք: Առանց ձեզ ես այնպիսի երազներ եմ տեսել այստեղ—ասացի ես մեծ զարմանալութեամբ:

—Ի՞նչպէս, Սայիբ, դուք քնած էիք: Հիմա որ աղաղակեցիք, ներս վազեցի և գտայ ձեզ սեղանի առաջ նստած, բոլորովին շիտակ, բաց աչքերով: Դուք նայում էիք ուղղակի այս ապակու մէջ:—Ինչպէս երազի մէջ լսում էի ես մէկի վարանուող ձայնը:

Բայց դա իմ գիտնական հնդկի՝ իմ ուսուցիչ Դրհմա-Սաստրիի ձայնը չէր:

Աչք ածեցի շուրջս, ջանք արի սթափուել, և ապշութեամբ նկատեցի, որ ես նստած եմ իմ սեղանի առաջ, սենեակումս, «մոգական բիւրեղի» առաջ, իսկ հանդէպս կանգնած է իմ բէնգալացի ծառան, որին ես բերել էի Կալկաթայից:

—Իսկ ո՞րտեղ է Դրհմա-Սաստրին — հարցրի ես:

—Ըզգիտեմ, երևի, իր *բէնգլօում*: Ըէ՞ որ Սայիբը ասում էր թէ հիւանդ է:

—Բայց նա այս բոպէիս այստեղ էր—աղաղակեցի ես:—Իսկոյն կ'երթամ նրա մօտ և կըհարցնեմ, թէ այս ինչ է նշանակում:

Ես ինձ ու ինձ էի խօսում, կարծես թէ ցնորւում էի:

Ծառաս, ըստ երևոյթին վախեցած իմ գրգռած դրութիւնից, երկիւղով նկատեց.

—Սայլերը ուզում է գնալ գիշեր ժամանակ։ Աւելի լաւ չէ՞ սպասել մինչև առաւօտ։

Ես հանեցի ժամացոյցս և նայեցի։ Նա ցոյց էր տալիս տասներկուսից հինգ րոպէ անց։ Երբ ես նստեցի հայելում նայելու համար, կէս գիշերին տասը րոպէ էր ուզում։ Ասել է, գեռ ուսուցիչս չ'եկած, որի գալուն բոլորովին հաւատացած էի, իմ հոկումս և գրգռած երևակայութեանս բոլոր խառնակութիւնը մի քառորդ ժամ հաղիւ էր տևել։ Իսկապէս, քնել և տեսել էի այդ բոլոր ծաղկեայ երազները հինգ րոպէի ժամանակամիջոցում։ Ի՞նչքան պատկերներ, ի՞նչքան շօշափմունքներ։ Իրօք, տարիները կարող էին տեղաւորուել մի վայրկեանի մէջ։

Ես յետ ուղարկեցի ծառայիս, պառկեցայ և մեռածի նման քնած մնացի մինչև առաւօտ...

Զարթնելուս պէս, շտապով հագնուեցայ, նախաճաշեցի և վազեցի Դրհմա-Սաստրիի մօտ։ Ես ամենևին չէի կասկածում, որ նա անցած գիշեր այցելել էր ինձ, բռնել էր ինձ իմ մաքսանենգութեան պարապմունքի մէջ և թափել էր իմ վրայ մոգական մի երազ, որի մէջ ես տեսայ մեր զբօսանքը, և նրան յաջորդող բաները։

Մօտենալով նախ աչքիս ընկաւ հեռւից նրա սանիկին։ Պատանին նստած էր բէնգլօուի մուտքի աստիճանների վրայ։ Ինձ տեսնելով, վեր կացաւ և դիմացս եկաւ։ Մօտիկից ես նըկատեցի, որ նրա դէմքը տխուր էր։

«Էհ, ի՞նչպէս է քո տէրը,—հարցրի,—կենդանի է, առո՞ղջ է»...

—Ոչինչ—պատասխանեց նա։—Հանգիստ է... Սպասում եմ, յոյս ունիմ, որ երկու օրից կըզարթնի... Առանց նրան սաստիկ տխուր է։

Մի քանի րոպէ ես լուռ նայում էի տղայի երեսին, բայց նա անկիրք, խաղաղ անթափանցիկ էր, ինչպէս միշտ։ Այնպէս լուռ հետևեցի նրան դուրուլի բէնգլօուն...

Հնդիկը շարունակում էր պառկած մնալ իր չոր տեղի վրայ առաջւայ նման անշարժ, բոլորովին անզգայ, ինչպէս չորս օր առաջ։ Ես երկար, տարակուսութեան մէջ նայում էի մերթ նրա և մերթ սանիկի վրայ, ոչինչ չըհասկանալով, և լուռ հեռացայ, խնդրելով պատանուն, որ երբ տէրն արթնանայ, իսկոյն ինձ իմաց տայ։ Դժուար էր համոզուել, որ նրա ինձ մօտ գալն հասարակ երազ էր...

Իմ վերջին այցելութիւնից յետ, ինչպէս ես սպասում էի, Դհրմա-Սաստրին արթնացաւ երրորդ օրը և ինքը եկաւ ինձ մօտ, ուրախ և աշխոյժ։

Առաջին հարցս եղաւ.

—Այդ դուք ի՞նչ, թէ էլի ձեր կրկնակը։

—Ոչ, այս անգամ ձեր առաջ ես ինքս եմ, սեփական մարմնով,—ժպտալով պատասխանեց նա,—կարող էք ձեռքս սեղմել։

Ես այդպէս էլ արի, ուժգին թափ տալով, և արդէն պատրաստւում էի հարց ու փորձ անել, թէ ինչ էր ինձ պատահել, երբ նա ինքը, հարցմունքի չըսպասելով, ասաց ինձ խորամանկ հայեացքով.

—Ա՜, դուք առանց ինձ բաներ ի՞նչ արել, ձեր ճակատագիրն էիք ուզում իմանալ։ Լաւ չէ։ Այդ պատճառով էլ ձեզ վախեցրել են ոգիները և ծաղրատեղի դարձրել ինչպէս հարկն է... Կարգապահութեան այդպիսի խախտումը կարող է վնասել մեր պարապմունքին...

Ես նրա վրայ նայում էի հարցական կերպով, բացատրութիւնների սպասելով, բայց տեսնելով, որ նա լուռ է, հարցրի.

—Ասել է, դուք ինձ մօտ էիք և ամեն բան գիտէ՞ք։

—Այո՛, էի, իմ կամքով և մտքով ու միայն մի ցանկու-

թեամբ պաշտպանել ձեզ այն բանից, որ տեսաք։ Եւ ինչ կարիք կար գաղտնիքը մերկացնելու ձգտել—ժպիտով ասաց Դիրմա-Սաստրին։—Այն ժամանակ այդ բոլորը չէր պատահիլ, չէիք տեսնիլ ձեր անհանգիստ երազը։

—Ասել է դուք ամեն բան գիտէք։—Բացականչեցի ես։—Ուրեմն ասացէք, ինչպէս մեկնեմ ես իմ տեսիլքը։ Մի՞թէ այն, ինչ որ ես տեսայ. պատասխան է իմ ցանկութեանը՝ իմանալ ինչ մահով կրմեռնեմ։

Դիրմա-Սաստրին կիտեց իր խիտ յօնքերը, նրա աչքերը մթնեցին, և ամբողջ դէմքը մի վայրկեան ընդունեց մի սաստիկ, սպառնալից պատկեր։

—Դուք գիտէք, ասաց նա, խստութեամբ ինձ նայելով—որ ես թշնամի եմ ամենայն տեսակ նախագուշակութեան և ոչ ոքին խորհուրդ չեմ տալիս իմանալ գալիքը։ Պարապենք աւելի լաւ է մեր գործով, իսկ դուք միևնոյն ժամանակ աշխատեցէք մոռանալ ձեր աննպատակ մոգութիւնը։ Յաւիտեան ջնջեցէք ձեր յիշողութիւնից անցեալ գիշերը...

. . . . . .

Այդ բանի վրայ ձեռագիրը վերջանում էր...

Ի հարկէ, այս ամբողջ պատմութեան մէջ ամենազարմանալին այն է, որ միստէր Թոմ Իսլինգտընը իրաւ կորաւ Չիկագոյում տեղի ունեցած բազմաթիւ հրդեհներից մէկում 1893 թ. ամառը։

Օր. Անահիտ Եզեկեան

ՎԱՅԵԼՉԱԿԱԶՄԸ ԵՒ ԼՈՒՍԱԴԵՂԸ

Ա.

Յին ժամանակներում ապրում էր մի թագաւոր։ Երկնքի աստղերին թիւ ու համար կար, այս թագաւորի հարստութեան, քաղաքներին ու գանձերին հաշիւ չրկար։ Նա սիրում էր ժողովրդին և սիրւած էր նրանից։ Ամեն մի հրաման, ամեն մի թագաւորի պատւէրը կատարում էր ժողովուրդը առանց դժւարանալու, առանց դժգոհութիւն յայտնելու։ Չընայելով սրան՝ թագաւորը կանչում է մի օր իր վէզիրին և ասում. «Քանի որ չահիլ էի, ժողովուրդս ամենայն սրբութեամբ կատարում էր բոլոր պատւէրներս և սիրով վերաբերւում դէպի ինձ, այժմ ծերացել եմ և կարծում եմ, որ բախտս էլ ծերացել է ինձ հետ, ուստի ուզում եմ փորձել թէ արդեօք իմ ժողովուրդը սիրում է ինձ այնպէս, ինչպէս չահէլ ժամանակ։ Այսօր մունետիկ դցել տուր մայրաքաղաքիս փողոցները և նրա բերանով յայտարարիր համայն ժողովրդին հետևեալը. «Թագաւորին սիրողը այս երեկոյ իր տանը կրակ չրվառէ. արևը մայր մտնելուն պէս՝ իր գիշերային պատրաստութիւնը տեսնի, ընթրիքն անէ և առանց ճրագլուսի՝ պատրաստւի քնելու»։

Պատւէրը կատարւած էր։ Երբ գիշերային խաւարը տիրեց երկրին, թագաւորը նորից կանչեց վէզիրին և նրա հետ դէրւիշի շորեր հագած՝ դուրս եկաւ փողոց անձամբ ստուգելու փորձը։ Խաւարը և խորին լռութիւնը տիրում էր չորս կողմը։ Կարծես քաղաքը սուգ էր մտել և զգեստաւորւել ոտից մինչը գլուխ բնութեան սև քողով։ Թպտեալ թագաւորը և վէզիրը շատ ման եկան, շատ աչք ման ածեցին այս կողմ, այն կողմ,

բայց ոչ մի տեղ կրակի հետք չընշմարեցին: Պատէրը ճըշտութեամբ կատարած տեսնելով, նրանք կամենում էին վերադառնալ արքունիք, բայց ահա ինչ-որ մի ստորերկրեայ, գետնափոր խրճիթի ցածլիկ լուսամուտներից նշմարուեցաւ մի աղօտ լոյս:

— Ես չէի ասում, որ իմ բախտը ծերացած կըլինի ինձ հետ եւ ժողովուրդը իմ պատէրս այնպէս չի կատարիլ, ինչպէս ջահէլ ժամանակս էր կատարում, շշնջաց թագաւորը վէզիրի ականջին եւ քայլերը ուղղեց դէպի գետնափոր խրճիթը:

Կահ-կարասիքից զուրկ, աղքատ խրճիթի ներսը փայլփլելով վառւում էր ճրագը՝ աղօտ լոյս սփռելով իր շուրջը: Խրճիթի մի կողմը հինաւած էր արեւելեան ճաշակով մի փառաւոր խալիչայ, որի առաջ նստած էին երեք մատաղահաս օրիորդներ եւ իրանց ճարպիկ մատներովն գործում էին ամենայն արագութեամբ: Հմուտ մատների շարժումը եւ անդադար մկուքի թփթփոցը չէր խանգարում նրանց քաղցը զրոյցներ անելու: Թագաւորը այս տեսարանով հետաքրքրուած, ականջը դէմ արեց գետնահաւասար լուսամուտի փեղկին եւ սկսեց ամենայն ուշադրութեամբ լսել նրանց խօսակցութիւնը:

Օրիորդներից անդրանիկն ասաց. «Աղջիկներ, թագաւորն որ ինձ առնի, այնպիսի մի խալիչայ կըգործեմ, որ բոլոր իր արքունականներով նստի վրան, դեռ խալիչայ մի կողմը ծալած մնայ:

Միջակն ասաց. «Թագաւորն որ ինձ առնի, այնպիսի մի վրան կըգործեմ, որ իր զօրքով ամբողջովին մտնի վրանը, բայց էլի մի կողմը դատարկ մնայ»:

Փոքրն ասաց. «Չէ, ես ինչ պարծենամ. ոչ այն կարող եմ անել եւ ոչ այն. թագաւորն որ ինձ առնի, Աստծոյ ամենակարող զօրութիւնով այնպիսի մի ոսկէ մազաւոր տղայ եւ ոսկէ մազաւոր աղջիկ կըբերեմ, որ արեգակին կ'ասեն. — Արեւ, դու մի դուրս գայ, որ մենք ենք դուրս գալու»:

Թագաւորն այս խօսքերը լսելուն պէս՝ հրամայեց վէզիրին նշնել խրճիթի դուռը եւ շտապով հեռանալ:

Հետեւեալ առաւօտը կանչուեցաւ օրիորդների հայրը եւ ներկայացաւ թագաւորին: Գլուխը կոր, աչքերը դէպ գետին խոնարհած՝ կանգնել էր նա թագաւորի առաջին եւ սրտատրոփ սպասում իր դատավճռին:

—Ա՛յ մարդ, դու քանի գլխու տէր ես, որ իմ պատէրիս հակառակ քո տանը այս երեկոյ՝ կրակ էիր վառել, խօսեց Թագաւորը:

—Տէր իմ, Թոյլ տուր երկու խօսք ասելու, հազիւ լսելի ձայնով արտասանեց պարտաղանցը:

—Խօսի՛ր.

—Ես մի բէկ քիւրդի պարտապան եմ: Այս գիշեր նրա աղջկան հարս էին տանում: Նա եկաւ իմ մօտ և պատւիրեց որ իր աղջկայ օժիտի համար հարկաւոր է մի խալիչայ. եթէ մինչև առաւօտ կարողացան իմ աղջիկները այդ խալիչան պատրաստել՝ լաւ, իսկ եթէ ոչ՝ նա պարտքի տեղ կրտանի իմ աղջիկներից նրան, որին որ հաւանի: Այդ պատճառով ես էլ լաւ համարեցի, որ իմ գլուխը Թագաւորի դահճի սրին զոհ գնայ, քան Թէ քիւրդ բէկը իմ աղջիկը յափշտակէ, և քո պատէրին հակառակ դնալով, պատւիրեցի աղջիկներիս պատրաստել խալիչան:

—Լաւ, եթէ ես քո յանցանքը ներեմ, քո աղջիկներից մեծը՝ վէզիրիս, միջակը նէզիրիս և փոքրը՝ ինձ կնութեան կրտաս, ասաց Թագաւորը:

Խօսակիցը չըհաւատալով իր ականջներին, որ այդպիսի խօսքեր Թագաւորի բերանից է լսում, կիսազարմացական և կիսահարցական նայւածքով սպասողական դիրք էր բռնել:

—Ա՛յ մարդ, խօսիր, է, ինչ ես պէլացել. կրտաս քո՞ աղջիկներից մեծը՝ վէզիրիս, միջակը՝ նէզիրիս և փոքրը՝ ինձ կնութեան, կրկնեց Թագաւորը իր հարցը:

—Տէր իմ. փոխանակ ծաղրելու, պատժիր ինձ, ինչպէս կամենաս:

—Չէ, հաւատա՛ ինձ, որ անկեղծ սրտից են բղխում այս խօսքերը և 'ի նշան դրա, տո՛ւր ինձ ձեռդ. ասաց Թագաւորը և սեղմեց իր երկու ափի մէջ խօսակցի աջ ձեռը, որ բարեկամութեան նշան է համարւում:

—Աա՛, խօսք տալիս ես, կտա՞ս.

—Տէր իմ, քո կամքն է.

—Չէ, քո կամքն է.

—Չէ, քո կամքն էլ պիտի լինի:

—Երբ քո ցանկութիւնն է, ես ինչ կարող եմ որ կամք չըտամ:

—Ուրեմն համաձայն ես.

—Այո, կիսաձայն պատասխանեց Թագաւորի անները:

(Կըշարունակի) Երուանդ Պողոսիսեան

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

XII

Ձիւնապատ լեռները չեն մեծանում:

Մենք արդէն գիտենք, որ քանի վերև բարձրանանք՝ այնքան էլ ցուրտ կըլինի: Ահա այդ պատճառով բարձր լեռների—(օր. Մասիսը, Արագածը, Ալպեան, Կովկասեան և Հիմալայեան լեռնաշղթաները)—վրայի ձիւնը երբէք չի հալչում:

Ընթերցողը դրանից կարող է եզրակացնել, որ ձիւնապատ լեռները հետզհետէ մեծանում են, որովհետև նրանց վրայի ձեան շերտերը կարող են աւելի ու աւելի հաստանալ նոր թափուող ձիւնից...

Սակայն այդ եզրակացութիւնը սխալ կըլինի և ահա թէ ինչու. հետզհետէ թափուող ձեան փաթիլները շարունակ չեն մնում լեռների վրայ. ժամանակի ընթացքում նրանք միանում—ձուլւում են իրար հետ և կազմում են հիւսեր—կիսասառցային կտորներ, որոնք իրանց ծանրութիւնը վերևում պահել չըկարողանալով, յանկարծ փուլ են գալիս և ահռելի դղրդիւնով, որոտաձայն աղմուկով գլորւում են դէպի ներքև, ճանապարհին ոչնչացնելով ամեն ինչ՝ թէ բուսականութիւն, թէ

բնակութիւն։ Այս հիւսերը այնպիսի արագութեամբ են գլորւում, որ նրանց շուրջը առաջ է գալիս ուժեղ քամի—մրրիկ։

Պատմում են, որ մի անգամ Ալպեան լեռներից ձեան հիւսը գլորւելիս մի այնպիսի քամի բարձրացաւ, որ տակն ու վրայ արեց մօտակայ ջրաղացը և դէս ու դէն շպրտեց նրա ահագին քարերը։ Շատ անգամ պատահում է, որ աւերիչ հիւսը ճանապարհորդում է անտառի միջով և այդ ժամանակ վայ հանդիպող ծառերին։

1846 թ. Ալպեան լեռներից պոկուեց ձեան մի մեծ հիւս, գլորուեց դէպի անտառը և այնտեղ ոչնչացրեց 15,000 ծառ (մայրի)։

1749 թ. մի այդպիսի հիւս Գրաուբինդէն գաւառում—(Զուիցերիա)—աւերեց ամբողջ գիւղը... բոլոր բնակիչներից ազատուեցին միայն 60 հոգի։

Վերջապէս մեր Կովկասեան լեռներն էլ այդ բանում միւսներից յետ չեն մնում։ Գրեթէ տարին մի քանի անգամ վայր ընկնող ձեան հիւսերը փակում են դէպի Վլադիկաւկազ տանող ճանապարհը—(Դարիալեան կիրճ)։

Դրանք երբեմն մարդկանց էլ են տակովն անում և ուրիշ շատ դժբախտութիւնների պատճառ դառնում։

Այդ բոլոր օրինակներն արդէն ցոյց են տալիս, որ ձիւնապատ լեռները չեն կարող մեծանալ, որովհետև նրանց վրայ գիզուող ձիւնը, թէև չի հալչում, բայց դարձեալ ներքև է իջնում մեծ-մեծ հիւսեր կազմելով։

Ե. Թովիչեան



ՍՈԽԱԿԻՆ

Սիրուն սոխակ, մի տխրիլ,
Քեզ փակել են վանդակում,
Կրգայ շուտով սիրուն գարուն
Երբ կրթուչես դաշտերում։
Կերթաս նորից դաշտ ու անտառ
Որբ ձագերիդ կրսիրես.
Եւ քո նախկին քանդուած բունը
Փետուրներով կրշինես։
Դու այնուհետ քո ձագերին
Կրթողնես ազատ թռչելու
Ու չար մարդկանց վանդակից
Իրանց հեռու պահելու։

Ց. Բարթանեան

Խելօքն ու յիմարը

Մի անգամ խելօքը ասաց յիմարին.

—Խելօք կաց, թէ չէ ականջիցդ կրբրու�եմ ու սարէսար մանի կածեմ:

Յիմարը պատասխանեց.

—Դու էլ խօմ ինձ հետ մանի կրգաս:

—Այո՛, ասաց խելօքը:

—Ուրեմն իմացիր, որ դու էլ ինձ պէս յիմար կրլինես:

Ց. Բ.

Պատմեցէք բուլանդակութիւնը



ԶԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Գ. Բաբուրեանցի.

21) Երկու վանկ, կամ թէ՝ հինգ հատ տառ՝
—Այդ պտուղ է շատ համեղ.
Երբ որ անցնի գարուն, ամառ՝
Նա կըլինի ամեն տեղ։
Սկզբի երեք տառը՝ անուն
Մանկանց սիրած մի բանի,
Իսկ երկուսը՝ կինն իր գլխին,
Ուր որ գընայ՝ կըտանի։

—

Առաջ. Ս. Հինաեկեանցի.

22) Գտած բառս է երկվանկանի,
Հոսող մի գետ Հայաստանի.
Եթէ սկզբում դուք այդ բառի
Բաղաձայն մի գիր աւելացնէք,
Այն ժամանակ մի անուանի
Անուն կըստանաք ձեզ քաջ յայտնի։

—

(Ժողովրդական)

Առաջ. Նոյնի.

23) Ինչաւոր ասեմ, շնչաւոր չի,
Թրռչուն ասեմ, թրռչուն չի.
Ոչ դլուխ ունի, ոչ թևեր
Եւ լողում է միշտ վեր-վեր.
Ապա եթէ ձախից կարդաք՝
Քաղաքի անուն դուք կըստանաք։

— —

ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Առաջ. Գ. Բաբուրեանցի.

24) Մի մարդ ունէր 25 բուբլի։ Այդ փողով նա բանուորմշակներ վարձեց թւով 25 հոգի.—մարդը՝ 3 բուբլիով, կինը՝ 50 կ., իսկ երեխաները՝ 25-ական կոպէկով։ Նա՞ որքան մարդ, կին և երեխայ վարձեց։

—

Առաջ. Յովհ. Ճաղարբէգեանցի.

25)

II

Հ
Ա
Շ
I Կ Ա Ի Փ Ա Ե Ե Ռ Ա
Ր
Ի
Ա
Ե

Այս քառակուսիներում դետեղել 3 ա. 2 ե. 1 գ. 4 ն. 2 ս. 1 տ. 1 ր. 1 փ., այնպէս որ I-ից կարդացուի մեր հանդուցեալ հրապարակախօսներից մէկի անունը, իսկ II-ից ազգանունը։

— —

Նախընթաց «Աղբիւրի» № 3-ի հանելուկների բացատրութիւնը. 15) Պատնէշ. պատ, էշ. 16) Աննա, ան, նա. 17) սար. 19) 12 աշակերտուհի. 20) 125,829 ր. 12 կ.։

18)

	3	
2	1	5
	4	

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го апрѣля 1897 года.
Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.

IV

«Յայտագիր Դաւթեան գործակալութեան և գրացուցակ»։ Միջագիր, 32 էջ. տպագրուած է Կ. Պոլիս, սոյն թուին։

V

Բժ. Թադէոս Զաքարեան. «Ամուսնական առողջապահութիւն»։ Միջագիր, 60 էջ. տպագրուած է Թիֆլիսում սոյն թուին. Մ. Ռօտինեանցի տպարանում. գինը 25 կոպ.։

VI

Քամալեանց Ս. «Հողածին և անմեռ աշխարհք» («Աղբիւրից»)։ Միջագիր, 32 էջ։ Տպագրուած է Թիֆլիսում սոյն թուին, Յ. Մարտիրոսեանցի տպարանում. գինը 8 կոպ.։

VII

Մանկական գրադարան. «Նապաստակի և ոզնու գրագը» (գունաւոր պատկերներով). Հրատ. Թիֆ-հրատ. ընկերութեան։ Միջագիր է, 16 էջ, տպագրուած Թիֆլիսում սոյն թուին, Մ. Ռօտինեանցի տպարանում, գինը 40 կոպ.։

VIII

Archac Tchobanian. L'Arménie, son histoire, sa littérature, son role Orient. Avec une introduction par Anatole France. Paris. Société du Mercure de France. 1897.

IX

Պրոֆ. Մոդեստ Բողդանով. «Խրժռողներ». Մարդուս մօտ բնակող կենդանիների կեանքից համառօտ նկարագիրներ (Պատկերներով)։ Ազատ թարգմանեց Լևոն Մելիք-Ադամեանց։ Միջագիր է, 168 էջ. տպագրուած է սոյն թուին, Թիֆլիսում Յ. Մարտիրոսեանցի տպարանում։ Գինը 50 կոպ.։

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր.	Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր փոխ.	1	25
ՍԱՄՈՒՆԻ ԿԵԱՔԻՑ—Ծերենցի Երկուցf IX դարու (սակաւաթիւ) .	2	—
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1	—
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Բանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	—	30
ՍՐԻՆԳ. Բնութեան երգեր և բանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	—	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճեռնապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10	—
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4	—
ՖԵՐԿԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՖԱՅԷԼԻ Մադոնաներ, Հրեշտակներ, ՐՈՒԲԷՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ՁԷՔՍՊԻՐԻ Բօմէօ-Ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	—	60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր ֆոտտօ-գրաւիւր պատկերը .	1	20
ՀԱՐԷՄԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շղթաներում	—	50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1	30
ՋՄԵՌ	—	20
ԱՐՏԱՂԷՍ Բ. թագաւորի մուտքը ի Հռոմ.	—	30

«ԱՂԲԻՒՐ»

Միամսեայ պատկերազարդ

ՀԱՆԹԷՍ

Տարեկան գինը 3 ր. (առասանման 4 ր.)
Հասցէն՝ Тифлисъ.
Редакція Агбюръ.

Աղբիւր-Տարազի

գրասենեակում Իտալիայից եւ Ֆրանսիայից ստացել են մեծ բանակութեամբ 200 **տեսակից աւելի** *օրիորդական շատ գեղեցիկ* **ՊԱՏԿԵՐՆԵՐ, հատը ճանապարհածախսով** 30 **կ. մինչ** 3 **ր.**

Սրբազան Իզմիրլեան պատրիարքի

ՄԵԾԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԸ

նկար Ս. Սողոմոնեանի

Վաճառւում է Աղբիւր-Տարազի խմբագրութեան գրասենեակում, ճանապարհածախսով 1 ր.

Հայաստանից փախած մի հայ

ԼԻԱՑԱՐԱՐՈՒՀԻ

յանձն է առնում ընտանիքներում լուանալ ճերմակեղէն եւ հասարակ ուրուածք,

օրական 40 *կոպ. վարձ առնելով։*
Հասցէն Տարազի գրասենեակում։

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր եւ գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր եւ Տարազի 96 եւ 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Агбюръ կամ Гаразъ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ճենապակու վրայ պատկերը վաճառւում է հատը 6 ր. ճանապարհածախսով։

ՊԵՏ. ՄՈՃՈՒԵԱՆՑ

	գին.
Բանաստեղծութիւններ	25 կ.
Վշտի աղբիւրից (սակաւած.)	5 »

Վաճառւում է Թիֆլիսում Կենդրոնական եւ Զ Գրիգորեանցի գրավաճառանոցներում. Բագու՝ Ղիրաբեանի և Երևան՝ Դաղամեանի մօտ։

Դումարով առնողներին զիջումն կրլինի։ 5—5

Թիֆլիսի Կենդրոնական եւ Կովկասեան զանազան բաղաքների գրավաճառանոցներում ծախւում է

Ա. ՏԲԳԵՏԻ

«Արմաս» վէպ բարձր-Հայոց կեանքից. գինն է. . . . . 2 ր.
«Խեւ-Կարապետ» վէպ Հայ-կաթոլիկների կեանքից . . . . . 1 ր.
«Զուշան» ողբերգ. օպերայի համար թուրք Հայոց կեանքից. . . 1 ր.
«Սարրաֆ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից. . . . . 30 կ.